ՀՀ դեսպան Էսթերա Մկրտումյանի հարցազրույցը արգենտինական «Perfil» թերթին

Հարց. Ձեր կարծիքով ո՞րն է Հայաստան-Ադրբեջան հակամարտության սրացման պատճառը:

Էսթերա Մկրտումյան. Ադրբեջանի կողմից զինադադարի խախտումները, ինչպես նաև ԼՂ շփման գծում դիպուկահարների գործողությունները կրել են մշտական բնույթ, սակայն եղել են այս գոտում, հաշվի չառնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների բազմաթիվ կոչերը: Զարմանալի է, որ ներկայիս հարձակումները տեղի են ունենում հայ-ադրբեջանական սահմանագծում, հայկական բնակավայրերի մերձակայքում: Ալիևյան դինաստիան որդեգրել է սպառազինությունների մրցավազքի և հակահայկական քարոզչության քաղաքականությունը՝ մերժելով համաձայնության հասնելու հեռանկարները: Ինչպես հաճախ է պատահում ավտորիտար վարչակարգերի պարագայում, առկա է միտում՝ ներքին խնդիրները քողարկելու արտաքին թշնամանքների սրացմամբ և թշնամիներին սպառնալիքներ հնչեցնելով, որոնց առկայությունն անհրաժեշտ է իշխանությունը պահելու համար: Ադրբեջանում ժողովրդավարության բացակայության հետևանքով առկա դժգոհություններն օրեցօր ավելանում են, որոնք էլ մղում են Ալիևին պաշտպանվել իր ագրեսիվ քաղաքականությամբ: Թուրքիայի աջակցությունն այս ագրեսիվ քաղաքականությանն էապես նպաստել է հակամարտության սրացմանը:

Հարց. Ինչպե՞ս ընդունեց ՀՀ կառավարությունը Ադրբեջանի պաշտպանության նախարարության «Մեծամորի» ատոմակայանը ռմբակոծելու սպառնալիքը:

Էսթերա Մկրտումյան. Սպառնալիքն անակնկալ էր ոչ միայն ՀՀ կառավարության, այլ նաև ամբողջ միջազգային հանրության համար: Կարծում եմ նախադեպեր չկան: Իրագործվելու պարագայում բնականաբար կհանգեցնի տարածաշրջանում հումանիտար և էկոլոգիական աղետի: Ադրբեջանում գոյություն չունեն ժողովրդավարական մեխանիզմներ, փաստ, որը ցույց է տալիս, որ որոշումները կայացվում են ոչ թե քննարկումների և ինստիտուցիոնալ մեխանիզմների գործադրման արդյունքում, այլ Ալիևի և նրա ընտանիքի անդամների քմահաճույքներին և անձնական նկրտումներին իռացիոնալ կերպով ենթակա ղեկավարների պոռթկումների հետևանքով:

Հարց. Ի՞նչ կարծիք ունեք Ադրբեջանին ռազմական օգնություն ցուցաբերելու Թուրքիայի հայտարարության կապակցությամբ:

Էսթերա Մկրտումյան. Ադրբեջանցիները թյուրքական ծագում ունեն, Թուրքիայի հետ կիսում են լեզուն, այբուբենը, մշակույթը և իսլամը: Սակայն Թուրքիան կրում է ցեղասպանություն իրագործողի դրոշմը, որը մարդկության դեմ հանցագործություններից վատագույնն է, առկա է նաև շուրջ 105 տարվա ժխտման առավել ծանրացուցիչ հանգամանքը: Ցեղասպանությունը վերապրած ժողովրդի դեմ ագրեսորին բացահայտ աջակցություն ցուցաբերելը ծայրահեղ քայլ է, որի գլխավոր դերակատար կարող էր

լինել այնպիսի առաջնորդ, ինչպիսին էրդողանն է, ում խորթ են միջազգային համակեցության և ժողովուրդների նկատմամբ հարգանքի նվազագույն նորմերը:

Հարց. ՀՀ վարչապետը վճռականորեն հայտարարեց, որ «Ղարաբաղը Հայաստան է», որը շատ վատ ընդունվեց Ադրբեջանի իշխանությունների կողմից:

Էսթերա Մկրտումյան. Հայաստանն աշխարհագրորեն առավել ընդգրկուն հասկացություն է քան ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը: Այդ մասին են վկայում աշխարհագրությունը և պատմությունը, գրքերն ու փաստաթղթերը, մշակույթն ու ճարտարապետությունը: Լեռնային Ղարաբաղը կամ Արցախը հայկական այս աշխարհագրության և պատմության մասնիկն է վաղեմի ժամանակներից՝ մինչև Կենտրոնական Ասիայից թուրք-մոնղոլական ներխուժումները: Կասկած չկա, որ Ղարաբաղը Հայաստան է: ԼՂ բնակչությունը հայեր են, քրիստոնյա, խոսում են հայերեն, ապրում են մի տարածքում, որտեղ ամենուր հայկական եկեղեցիներ և վանքեր են, սա այն հողն է, որտեղ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը սկսեց սովորեցնել հայկական այբուբենը, որը ստեղծել էր 405 թվականին, շուրջ 1615 տարի է, որ այնտեղ կան հայկական միջնադարյան խաչքարեր: Արդյո՞ք որևէ մեկը կարող է ժխտել, որ սա Հայաստան է: Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը այդ նույն Հայաստանի մեկ տասներորդն է: Արդյո՞ք որևէ մեկը կարող է ասել, որ Արարատ լեռը հայկական չէ, որքան էլ որ այն գտնվի Թուրքիայի տարածքում: Հայաստանի կառավարությունը որևէ երկրից տարածքներ չի պահանջում: Սակայն ԼՂ բնակչությունը հայ է, քրիստոնյա, բնիկ, խոսում և մտածում է հայերեն, այնտեղ է բնակվում է վաղեմի ժամանակներից: Սա ի նկատի ունի ՀՀ վարչապետը:

Հարց. Ի՞նչ եք կարծում, Ռուսաստանը կամ Իրանը կարո՞ղ են որպես միջնորդ կարևոր դերակատարություն ունենալ

Էսթերա Մկրտումյան. Ռուսաստանը շուրջ 30 տարի է միջնորդական կարևոր դերակատարություն ունի: Սկսած այն ժամանակներից, երբ Ռուսաստանը խորհրդային կառավարության կենտրոնն էր, իսկ Հայաստանը և Ադրբեջանը հանդիսանում էին ԽՍՀՄ հանրապետություններ, Ռուսաստանի դերակատարությունը Կովկասում չի նվազել: Ռուսաստանը 1994 թվականի զինադադարի ակտիվ մասնակիցներից էր: ՀԱՊԿ հիմնադիր երկիր է, որին անդամակցում են նաև Բելառուսը, Հայաստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: Հայաստանում ռուսական ռազմաբազան համարյա մեկդարյա պատմություն ունի: Հայ-թուրքական սահմանը հսկում են ռուս սահմանապահները: Ռուսական դիվանագիտությունը և անձամբ ԱԳ նախարարը մշտապես իրականացնում են միջնորդական գործունեություն կողմերի միջև: Իրանը մոտիկից հետևում է գործընթացներին և նույնպես ցուցաբերել է պատրաստակամություն հանդես գալ որպես միջնորդ: